ոմանք՝ երկնքի (Lauer, Syst. d. gr. Mith, էջ 242), ուրիշները՝ երկրի կամ ստորերկրեայ եւ վերջապէս կան ընդունողներ, որ նա լուսի եւ արեւի աստուածութիւն է (Welcker, Gr. Goetterlehre I 405)։

Մեր անձնական դիտողութիւնները բերում են ուրիշ հետեւանքի։

Եթէ ուշի ուշով կրկնելու լինենք Արէսի շուրջը դիզուած դիցաբանական առաղձը, կը տեսնենք այնպիսի գծեր, հնանիշ ակնարկներ, որ վերաբերում են նրա սկզբնական կեանքին եւ լուսաւորում նրա առաջին քայլերը։

Հոմերոսի մօտ Արէսի մերձաւորը կոչւում է Ենիո, որը նրա համար ե՛ւ մայր է ե՛ւ աջակից կուռում (Իլիական Ե. 592)։ Այս է պատճառը, որ Արէսը կրում է երբեմն նրա անունը, Ենիական։

Արէսի կապը Ենիոյի հետ հին յիշողութիւն է եւ կարեւոր։

Թւում է, որ Ենիոն կանացի դէմքը ոչ այլ ոք է, եթէ ոչ Աֆրոդիտէի նախորդը։ Պելազգական Աֆրոդիտէն գրաւել է Թրակացի Ենիոյի դիրքը Արէսի նկատմամբ։ Այնինչ Թեբայում Աֆրոդիտէն արդէն Արէսի կինն էր համարւում, Լեմնոսում նրա օրինաւոր ամուսինը տակաւին Հեփեստ(ոս)ն էր եւ Արէսի տարփանքը Աֆրոդիտէի հանդէպ ապօրինի էր նկատւում, ինչպէս երեւում է ցանցի սիրային արկածից, երբ Հեփեստը իբր խաբուած ամուսին հետապնդում է իր երջանիկ հակառակորդին, Արէսին։

Ենոյի եւ Արէսի մտերմութիւնը չէր մոռացուած դեռ եւս Դ. դարում։ Թրակիայում սովորութիւն կար գերիներին զոհել Արէսին եւ Ենոյին, ինչպէս պատմում է Ամմիան Մարկելինը (XXVII,44)։

Թւում է, որ այս զոյգի յարաբերութիւնը աւելի բարդ է եղել քան Արէսի եւ Աֆրոդիտէի եւ մօտ Ատիս–Կիբելեան սերտութեան։ Կարծում ենք, որ Ենիոյի անունն իսկ **enn, enuo,** ուրիշ բան չէ, եթէ ոչ nana, nina անուան մի այլ ձեւը, եւ պատկանում են այն բառերի թւին, որ Կրեչմէր գիտնականը կոչում է Lallnamen այսինքն՝ մանկական թոթովանք։

Մի քանի դիւրահնչիւն ձայների, որպիսին են պ, մ, ն, կրկնութեամբ կազմւում է մանկական առաջին բառարանը, ուղղուած իր ծնողներին։ Ենիո, Նանա նշանակում են մայր։

Արդ՝ յիշենք, որ Նանէ էր կոչւում եւ Ատիսի մայրը Սանգար գետի զարմանալի աղջիկը, որ Ագդիստի կամ Կիբէլի արիւնից բուսած նուռն իր ծոցն առնելով յղացաւ եւ կեանքի կոչեց Ատիսին։

Հաւանական է, որ նման մի առասպել գոյութիւն ունեցած լինի եւ Արէսի վերաբերեալ։ Ովիդի(ոս)ն ասում է, որ Հերան ծնել է Արէսին մի հրաշալի ծաղկից, ուրեմն առանց Զեւսի մասնակցութեան (Fast. V 229) Հերան այստեղ նոյնանիշ է Նանէին եւ ուրեմն Արէսը՝ Ատիսին։

Ուշադրաւ է նաեւ Արէսի կապը վիշապի հետ։ Պինդարի հեղինակաւոր վկայութեամբ Արէսի հայրը վիշապն է, եւ նոյնժամայն երկրից եւ Արէսից է ծնուած վիշապը։

Այստեղ երկիրը նշանակ է Երինիսի, որ է Արէսի կինը։

Երինիսը մեզ արդէն յայտնի Ենոյի մի այլ դէմքն է։ Միեւնոյն անձը ե՛ւ մայր է ե՛ւ կին, միեւնոյն անձը ե՛ւ հայր ե՛ւ որդի, ինչպէս Արէսն եւ վիշապը — յար եւ նման փռիւգական նուիրախորհուրդին յայտնի ձեւակին. ցուլը՝ ծնունդ վիշապի եւ վիշապը՝ հայր ցուլի, որ բերում է Կլեմենտ Աղեքսանդրացին. (Protrept II)։

Նկատելու է, որ օձը մայր աստուածուհու խորհրդանշաններից է. սրբազան կենդանի է, որ ապրելով երկրի խորշերում բնականօրէն աստուածուհու մտերիմն է համարւում։

Օձի մի այլ պատկերն է փռիւգական Սաազի(ոս) աստուածը, որ մայր աստուածուհու վերաբերմամբ համահաւասար է Ատիսին։

Մի ուրիշ հնանիշ գիծ։ Հոմեր(ոս)ը (Իլիակ. Ե. 385) պատմում է, որ Ալոյադները բռնել եւ փակել էին Արէսին «երկաթէ թոնիրում, 13 ամիս շարունակ, որովհետեւ նա սպանել էր Ադոնիսին որսի ժամանակ։ Ալոյադները, ինչպէս վկայում է իրենց անունը (յունարէն) ներկայացնում են հունձն եւ կալ ու կուտը։ Նրանց զինակցութիւնը Ադոնիսին, բուսականութեան տիրոջ, հասկանալի է։ Արէ-